«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2020

ՆԱԽԱԲԱՆ

«Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ««Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրի թիվ 5 նախապայմանի շրջանակներում: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Գործընթացը կազմակերպելիս ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ի «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959-Ն որոշմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ..... Error! Bookmark not defined.
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... Error! Bookmark not defined.
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ..... Error! Bookmark not defined.
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ..... Error! Bookmark not defined.
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 13
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 13
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 15
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 16
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 18
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 21
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 22
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 24
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 27
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 28
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 30
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 33
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 34
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 34
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 36
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 37
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 38
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 38
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 39

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. Կարևոր դերակատարություն տարածաշրջանի գյուղատնտեսության ոլորտը միջին մասնագիտական կադրերով համալրելու տեսանկյունից:
2. Գրավիչ է տարածաշրջանի դիմորդների համար:
3. Կրթական ծրագրերը համապատասխանում են հաստատության առաքելությանը և պետական կրթական չափորոշիչներին:
4. Մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման համար առկա է բարենպաստ ուսումնական միջավայրը:
5. Քոլեջը համալրված է ՄԿԾ-ների իրականացման համար բավարար շենքային պայմաններով և ռեսուրսներով:
6. Քոլեջը ապահովված է ՄԿԾ-ներին համապատասխան որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով:
7. Քոլեջում կան ուսումնական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված բավարար ծառայություններ, պայմաններ են ստեղծվում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների և դասախոսների համար:
8. Գործում է արտաքին և ներքին հաշվետվողականության համակարգ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) Բացակայում է գործողությունների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ փոխկապակցված պլանավորման համակարգը:
2) Կառավարման և որակի ապահովման գործընթացներում ՊԻՍԲ շրջափուլը ամբողջությամբ ներդրված չէ. թերի են գնահատման և բարելավման բաղադրիչները:
3) Սակավ են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները, դրանց վերլուծությունները խորքային և համակողմանի բնույթ չեն կրում ու չեն նպաստում բարելավումներին:
4) Բացակայում են կրթության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմները:
5) Ֆինանսական մուտքերը կախվածություն ունեն մեկ հիմնական աղբյուրից՝ ներպետական ֆինանսներից:
6) Բացակայում է քոլեջի միջազգայնացմանը և փորձի փոխանակմանը նպաստող միջավայր ստեղծելու համակարգված քաղաքականությունը:
7) Ուսանողների և աշխատակազմի օտար լեզուների իմացության մակարդակը ցածր է:
8) Որակի ներքին ապահովման համակարգը դեռևս ներդրված չի:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առաքելությունը և նպատակները

1) Վերանայել և հստակեցնել քոլեջի առաքելությունը և սահմանել ռազմավարական նպատակներ, դրանցից բխող խնդիրներ և քայլեր՝ սահմանելով առավել իրատեսական, չափելի ու քոլեջի շահակիցների հետ համաձայնեցված և նրանց կոմից ընկալելի հավակնություններ՝ գլխավորապես շեշտադրելով քոլեջիի կարևոր դերը տարածաշրջանի համար:

2) Մշակել ռազմավարական ծրագիր՝ թիրախավորելով ռազմավարական ուղղություններն ու գերակայությունները և սահմանելով ծրագրի իրականացման հստակ ժամանակացույց:
3) Ընդլայնել շահակիցների (հատկապես արտաքին շահակիցների) ընդգրկվածության շրջանակը քոլեջի ռազմավարական ծրագրի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում՝ կիրառելով և պարբերաբար վերլուծելով շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը:
4) Մշակել կարճաժամկետ ու միջնաժամկետ գործողությունների ծրագրեր և դրանց իրականացման, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ:
5) Ստեղծել ռազմավարության հարցերով զբաղվող խորհուրդ կամ հանձնաժողով՝ ռազմավարության ամբողջ առաջընթացը մշտադիտարկելու, խոչընդոտների մասին տեղեկացնելու, դրանց հաղթահարման ուղիները բացահայտելու, խնդիրների վերանայման առաջարկություններ կատարելու համար:

Կառավարումն ու վարչարարությունը

6) Հստակեցնել և համակարգել կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների գործառույթները:
7) Ներդնել վարչական կառույցների և դրանց գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև ամբիոնային աշխատանքների լավագույն փորձի բացահայտման ու տարածման մեխանիզմներ:
8) Վերանայել կառավարման բոլոր մակարդակներում քոլեջի քաղաքականությունների ու ընթացակարգերի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման ՊԻՍԲ սկզբունքով:
9) Պարբերաբար ուսումնասիրել և վերլուծել քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնները:
10) Հստակեցնել ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ըստ ռազմավարական գերակայությունների:
11) Վերանայել քոլեջի էթիկայի կանոնները, համապատասխանեցնելով դրանք քոլեջի առաքելությանը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

12) ՀՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի նկարագրիչներին համահունչ հստակ ձևակերպել քոլեջի ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքները:
13) Մշակել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հստակ քաղաքականություն, իրականացնել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների պարբերական արդիականացում և համապատասխանեցում ուսումնառության ակնկալվող արդյունքների հետ :
14) Իրականացնել ակադեմիական ազնվության ապահովման գործող մեխանիզմների արդյունավետության գնահատում, աշխատանքներ տանել վերջիններիս բարելավման, նորերի մշակման, ուսանողության շրջանում իրազեկվածության բարձրացման շուրջ:
15) Բազմազանեցնել պրակտիկաների ձևերը՝ մշակելով համապատասխան ընթացակարգեր, վերահսկման և գնահատման դրույթները:
16) Մշակել բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանություն և արդյունքների կիրառման մեխանիզմներ:

Ուսանողները

17) Մշակել ուսանողների հավաքագրման, նրանց տրամադրվող խորհրդատվությունների ու մատուցվող այլ ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
18) Մշակել կարիերային նպաստող մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման գործիքակազմ:
19) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար ստեղծել ուսումնառության անհրաժեշտ միջավայր, տրամադրել անհրաժեշտ օժանդակություն և խորհրդատվություն:
20) Կանոնակարգել լրացուցիչ պարապմունքների կազմակերպումն ու իրականացումը, կազմել հստակ ժամանակացույցեր:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

21) Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգում ներառել դասախոսի մասնագիտական որակներին պահանջվող համապատասխան կետեր և գործնականում առավել ակտիվ կիրառել մրցութային կարգը:
22) Ներդնել դասախոսական կազմի կարիքների վերհանման արդյունավետ համակարգ, վերանայել դասախոսների աշխատանքների որակի և արդյունավետության բարձրացման նպատակով անցկացվող հարցումների հարցաշարերը և բացատրական աշխատանք տանել հարցվողների շրջանում:
23) Վերհանված կարիքների հիման վրա իրականացնել դասախոսների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ: Պարբերաբար իրականացնել դասախոսական կազմի ինչպես մեթոդական, այնպես էլ մասնագիտական վերապատրաստումներ: Բարելավել առկա վերապատրաստման դասընթացների որակն ու արդյունավետությունը:
24) Պրոֆեսորադասախոսական կազմի բնականոն սերնդափոխության նպատակով մշակել գիտամանկավարժական կադրերի պատրաստման հստակ քաղաքականություն:
25) Մշակել ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության քաղաքականություն՝ կանոնակարգելով վերջիններիս գործառույթները պաշտոնի անձնագրերով:
26) Իրականացնել մարդկային ռեսուրսների պլանավորում և մշակել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն:

Հետազոտությունը և զարգացումը

27) Մշակել և սահմանել Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի հետազոտության ուղղի հստակ սահմանված գերակայություններն ու առաջնահերթությունները՝ շեշտադրելով տարածաշրջանի կարիքները և կարևորելով հետազոտության արդյունքների հնարավոր ապրանքայնացումը:
28) Մշակել և կիրառել հետազոտական աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման գործիքներ, առաջընթացը չափագրող մեխանիզմներ և ցուցանիշներ:
29) Մշակել հետազոտական գործունեության կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրեր՝ ապահովելով ռազմավարական ծրագրում սահմանված հետազոտական առաջնահերթությունների հետ փոխախկապակցվածությունը:
30) Մշակել ուսանողների և դասախոսների հետազոտական գործընթացներում ներգրավման խրախուսման հստակ մեխանիզմներ՝ ակտիվացնելով ուսանողների և

դասախոսների համագործակցությունն ինչպես քոլեջի ներսում, այնպես էլ այլ ուսումնական հաստատությունների միջև:

31) Մշակել հետազոտական գործունեության միջազգայնացման հստակ քաղաքականություն՝ խթանելով այլ հաստատությունների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացումն ու հրապարակումները:
32) Ներդնել ՄՈՒՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործուն մեխանիզմներ՝ ապահովելով հետազոտական գործունեության արդյունքների ներդրումն ուսումնական գործընթացում:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

33) Բարելավել քոլեջի ենթակառուցվածքները՝ միջոցներ տրամադրելով շենքային պայմանների վերանորոգմանը, լաբորատորիաների վերազինմանը, նորագույն սարքավորումների և համապատասխան նյութերի ձեռքբերմանը:
34) Կատարել յուրաքանչյուր ՄԿԾ-ի իրականացման ու շարունակականության ապահովման համար անհրաժեշտ կարիքների վերլուծություն՝ ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխման նպատակով:
35) Մշտադիտարկել և գնահատել ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը՝ ըստ ռազմավարական նպատակների:
36) Համալրել գրադարանային ֆոնդը համապատասխան մասնագիտական գրականությամբ: Անդամակցել գրադարանային ցանցերին:
37) Բարելավել քոլեջի ենթակառուցվածքները՝ հաշմանդամություն ունեցող ուսանողներին և աշխատակիցներին հնարավորինս ապահովելով ուսման համար անհրաժեշտ պայմաններով:
38) Իրականացնել բարելավման միջոցառումներ՝ շահակիցներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման արդյունքների հիման վրա:

Հասարակական պատասխանատվությունը

39) Բարելավել հաշվետվողականության ապահովման մեխանիզմները, դրանք դարձնել առավել վերլուծական ու պարբերաբար գնահատել գործընթացի արդյունավետությունը:
40) Բարելավել պաշտոնական կայքէջում զետեղված տեղեկատվությունը քոլեջի գործունեության բոլոր տիրույթների վերաբերյալ, ընդլայնել քոլեջի վերաբերյալ տեղեկատվությունը օտար լեզուներով, գործարկել այցելուների մեկնաբանություններ թողնելու մեխանիզմը:
41) Ամրապնդել հասարակության հետ կապերը և զարգանել շահակիցների հետ համագործակցությունը՝ ներդնելով հետադարձ կապի արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ:
42) Վերապատրաստումների և լրացուցիչ դասընթացների կազմակերպման միջոցով ընդլայնել վճարովի ծառայությունների ձևերն ու հաշվեկշիռը բյուջեի եկամտային մասում:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

43) Մշակել քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարական իրատեսական նպատակներ ու խնդիրներ, դրանց իրականացման համար հատկացնել համապատասխան ռեսուրսներ:

44) Ստեղծել քոլեջի ռազմավարական խնդիրներին ավելի փոխկապակցված գործընկերային կապեր:
45) Ապահովել առավել արդյունավետ և երկարաժամկետ հնարավորություններ քոլեջի ներքին շահակիցների (հատկապես՝ ՊԴ կազմի և ուսանողների) օտար լեզվի իմացության բարելավման և դրա միջոցով քոլեջի միջազգայնացման գործընթացները խթանելու համար:
46) Իրականացնել կարիքների վերհանում և վերլուծություններ՝ գնահատելու քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման զարգացմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը և բարձրացնելու տեղեկացվածության մակարդակը:
47) Արտասահմանյան համանման գործընկերների հետ իրականացնել ՊԴ և ուսանողական կազմի փոխանակման ծրագրեր, կատարել կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն:

Որակի ներքին ապահովման համակարգը

48) Վերանայել քոլեջի որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու նպատակները՝ քոլեջի ծավալած գործունեությունը համապատասխանեցնելով վերջիններիս:
49) Գնահատել որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման նպատակով քոլեջի տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարությունն ու արդյունավետությունը:
50) Պարբերաբար գնահատել քոլեջի տրամադրած ծառայությունների և ՄԿԾ-ների իրականացման արդյունավետությունը:
51) Ապահովել ՊԻՍԲ շրջափուլի կիրառումը քոլեջի բոլոր գործընթացներում և կառավարման բոլոր մակարդակներում, որի արդյունքում քոլեջը կբարելավի ՈԱ մեխանիզմները և կկարողանա գնահատել ու շարունակաբար վերանայել ՈՆԱ համակարգը:
52) Ընդլայնել շահակիցների (հատկապես արտաքին) ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում և գնահատել ներգրավվածության արդյունավետությունը:
53) Պարբերաբար հետադարձ կապ տրամադրել շահակիցներին իրենց առնչվող հարցումների արդյունքների և հավաքագրված տեղեկատվության վերաբերյալ:
54) Կանոնակարգել տվյալների կառավարման գործընթացները և հստակեցնել քոլեջի տարբեր ստորաբաժանումների միջև տեղեկատվության տարածման ու վերջինիս կառավարման մեխանիզմները:

Տիգրան Խաչատրյան ,
Փորձագիտական խմբի ղեկավար

Ամսաթիվ՝ 24.01.2020

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Քոլեջի ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

1. **Տիգրան Խաչատրյան՝** Ուստիկանության ակադեմիայի Որակի ապահովման, ՀՀ, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Ռոզա Հարությունյան՝** Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, ՀՀ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Էթերա Խաչատրյան՝** ՀԱԱՀ Ա.Ե.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի փոխտնօրեն, ՀՀ, փորձագիտական խմբի անդամ,
4. **Ռոլֆ Օթթո Կուխենբուտ՝** Ռոստոկի համալսարան, գյուղատնտեսության խորհրդատու, Գերմանիա, փորձագիտական խմբի անդամ,
5. **Գայանե Վարդանյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի հաշվապահական հաշվառում մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել են ՈԱԱԿ-ի Քաղաքականությունների մշակման և իրականացման բաժնի ավագ մասնագետ Լիլիթ Զաքարյանը:

Թարգմանությունը կատարել է «Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի դասախոս Աննա Շահբազյանը:

Գործընթացում որպես դիտորդ մասնակցել է Ագրոբիզնեսի և գյուղատնտեսության զարգացման բուլղարական համալսարանի որակի ապահովման և հավատարմագրման գծով պրոռեկտոր Պատրիցիա Գեորգիևան:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է քոլեջի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամներն, այդ թվում՝ թարգմանիչը, համակարգողները և դիտորդը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար քոլեջը ՈԱԱԿ-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի Քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը: ՈԱԱԿ-ը կայացրել է դիմում-հայտի ընդունման մասին որոշում և կազմել ու հաստատել աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Նախապատրաստական փուլ

Քոլեջը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: ՈԱԱԿ-ը կազմակերպել է ինքնավերլուծության թարգմանությունն՝ արտաքին մասնագետի ներգրավմամբ:

ՈԱԱԿ-ի համակարգողներն ուսումնասիրել են ինքնավերլուծությունը և կից փաթեթը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Քոլեջի ինքնավերլուծությունը և կից փաթեթը ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել է հավատարմագրման գործընթացի համակարգողների դրական կարծիքը ստանալուց հետո:

Ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով պատասխանատուների կողմից իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. հավատարմագրման գործընթաց, փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններ, փորձագետի էթիկայի և վարքագծի կանոններ,
2. ինստիտուցիոնալ ինքնավերլուծության նախնական գնահատում պրակտիկայից վերցված օրինակների միջոցով,
3. փորձագիտական այց դերային խաղերի միջոցով,
4. փորձագիտական զեկույցի պատրաստում:

Փորձագիտական խումբն, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթն, իրականացրել է նախնական գնահատում, որի արդյունքում դուրս են բերվել քոլեջի հնարավոր ուժեղ և թույլ կողմերը: Ըստ ձևաչափի՝ պատրաստվել է լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև պարզաբանման ենթակա խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները և թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և գործընթացի համակարգողները փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել են փորձագիտական այցի ժամանակացույցը[1]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախապատրաստական այց

2019 թ. դեկտեմբերի 27-ին քոլեջի տնօրենի հետ հեռախոսով և առցանց քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, քննարկվել են նաև կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության հարցեր:: Նախնական այցը տեղի է ունեցել փորձագիտական այցի նախորդ օրը՝ 2020թ. հունվարի 15-ին: Հանդիպում է եղել ԳՊԳՔ տնօրենի հետ: Ուսումնասիրվել են փորձագիտական խմբին տրամադրվող սենյակները, հանդիպումների դահլիճը, քննարկվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, ինչպես նաև հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

---

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Փորձագիտական այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը (15.01.2020թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները (ներառյալ՝ միջազգային փորձագետը), համակարգող Լիլիթ Զաքարյանը և թարգմանիչն ունեցել են փակ հանդիպում Գավառում: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբը համաձայնեցրել է փորձագիտական գնահատման շրջանակը, չափանիշների գնահատման սանդղակը, որն ըստ ՈԱԱԿ-ի ընթացակարգերի՝ ներառում է երկու մակարդակ՝ 1) բավարարում/համապատասխանում է չափանիշի պահանջներին, 2) չի բավարարում/համապատասխանում չափանիշի պահանջներին: Վերջնականացվել են այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, հաստատության ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հանդիպումների վարման էթիկան, հստակեցվել են հետազա քայլերը:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2020թ.-ի հունվարի 16-ից 18-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը մեկնարկել և ավարտվել է քոլեջի տնօրենի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոս, ուսանող, շրջանավարտ, գործատու, ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի մասնակիցներին ընտրել է փորձագիտական խումբը՝ քոլեջի կողմից նախօրոք տրամադրված ցանկերից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[2], ռեսուրսների դիտարկում[3] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել քոլեջի տարբեր ստորաբաժանումներում: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների հետ բաց քննարկումները:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների հետ բաց և անկեղծ քննարկումները:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռքբերված տեղեկատվությունն, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության՝ նախ հավատարմագրման առանձին չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական այցից հետո փորձագիտական խումբը քննարկումների արդյունքում պատրաստել է հավատարմագրման զեկույցը, որը կազմելիս հիմնվել է քոլեջի ինքնավերլուծության գնահատման և փորձագիտական այցի դիտարկումների վրա: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Խմբի ղեկավարը գործընթացի համակարգողի օժանդակությամբ պատրաստել է հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն իրենց ներդրումն են ունեցել զեկույցի յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ դիտարկումների շարադրման գործում, ինչպես նաև արձագանքել ամբողջական տարբերակին: Փորձագիտական խմբի անդամների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի նախնական տարբերակի ամփափման ժամանակ: Զեկույցը ամբողջականացնելիս

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

փորձագիտական խմբի ղեկավարը նաև հաշվի է առել միջազգային փորձագետի կողմից հայտնած կարծիքը յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ, նրա գնահատականները և խորհրդատվությունները:

Լիլիթ Զաքարյան,
Համակարգող

24.01.2020

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ը իր առաքելությունը ձևակերպել է Կառավարման խորհրդի կողմից 2016 թվականին հաստատված 2016-2020թթ. ՌԾ-ում: Ըստ առաքելության՝ «...տարածաշրջանի առանձնահատկությունների հաշվառմամբ գյուղատնտեսության՝ որպես առաջնահերթ ոլորտի, ինչպես նաև բիզնեսի, տրանսպորտային ծառայությունների, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների և այլ ոլորտների մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, սովորողներին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով, հմտություններով, արժեքային հատկանիշներով զինումը, մրցունակ և որակյալ կադրերով պատրաստումը, ուսումնամեթոդական, դաստիարակչական սոցիալ մշակութային գործառույթների իրականացումը», քոլեջն իր գործունեությունը նպատակաուղղում է միջին մասնագիտական կրթությամբ և համապատասխան որակավորմամբ կադրերի պատրաստմանը: Ընդհանուր առմամբ քոլեջի առաքելությունը համահունչ է ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին:

Քոլեջի հիմնական նպատակն է՝ գյուղատնտեսական և տարածաշրջանում այլ պահանջարկ ունեցող մասնագիտություններին համապատասխան կրթական ծրագրերի իրացմամբ տարածաշրջանի կարիքները բավարարելու համար կրթական ծառայությունների մատուցումը: Նշվածի հիման վրա ձևակերպվում են քոլեջի ՌԾ-ով սահմանված հիմնական հիմնախնդիրները, որոնք ութն են: Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ սահմանված հիմնախնդիրներում արտացոլվում են քոլեջումում իրականացվող հիմնական գործընթացները:

Քոլեջի գործունեության ընդհանուր ռազմավարական պլանավորումը և հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունները մշակվել են քոլեջի խորհրդի կողմից և հաստատվել 2016թ. փետրվարի 19-ի թիվ 19 նիստում՝ քոլեջի և տարածաշրջանի կարիքներից ելնելով:

Ռազմավարական ծրագրի իրականացման համար մշակվում է ամենամյա աշխատանքային պլան, որտեղ նշված են ծրագրի իրականացման քայլերը, ժամանակացույցը, պատասխանատուները, սակայն, չկան ակնկալվող արդյունքները: ՌԾ-ում նաև առկա չեն յուրաքանչյուր ռազմավարական հիմնախնդրի համար առաջընթացի գնահատման ցուցիչներ:

Քանի որ քոլեջը հանդիսանում է տարածաշրջանում միակը իր ոլորտային գյուղատնտեսական մասնագիտություններով, ուստի վերջինիս համար որպես արտաքին շահակիցներ են հանդիսանում տարածաշրջանում գործող ֆերմերները և տարբեր տնտեսություններ վարող ազգաբնակչության ստվար հատվածը: Քոլեջին հաջողվել է ստեղծել արտաքին շահակիցների մասնակցությամբ կառավարման խորհուրդ, որտեղ ներգրավված են տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր օղակների ներկայացուցիչներ, ուսանողներ, լիազոր մարմնի ներկայացուցիչ և այլ շահակիցներ: Վերջիններս քննարկել և հաստատել են քոլեջի գործունեության ռազմավարական ծրագիրը: Քոլեջում տարբեր

միջազգային կառույցներ իրականացնում են նաև արտաքին շահակիցների մասնակցությամբ բազմաբնույթ միջոցառումներ, ինչը նպաստում է քոլեջի արտաքին շահակիցների ներգրավվածությանը և կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը: Որպես արտաքին շահակից է հանդես գալիս նաև ԳՊՀ-ն, որի հետ կա սերտ համագործակցություն:

Իսկ ներքին շահակիցների կարիքները վեր են հանվում ՊԴ կազմի հետ պարբերաբար հարցումների, հանդիպումների, պլանավորված ժողովների, մանկավարժական և տնօրինական խորհուրդների, ամբիոնային նիստերի ընթացքում: Քննարկումների արդյունքները ՈՆԱ պատասխանատուի կողմից դեռևս չեն վերլուծվել: Ներքին շահակիցներից վարչական և ուսումնաօժանդակ հատվածի շրջանում կարիքների վերհանում դեռևս տեղի չի ունենում և ՈՆԱ խումբը բավարարվում է միայն ՊԴ կազմի և ուսանողների շրջանում հարցումներ իրականացնելով:

Քոլեջի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման հիմնական մեխանիզմը արտաքին և ներքին հաշվետվողականությունն է: Քոլեջը հաշվետվություն է ներկայացնում օրենսդրությամբ սահմանված համապատասխանաբար լիազոր մարմնին, հարկային մարմիններին, իսկ ներքին շահակիցները՝ կառավարման, տնօրինական, մանկավարժական խորհուրդներում, ամբիոններում և այլն:

Ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների չափման և գնահատման համար ռազմավարական ծրագրում դեռևս չկան առաջադրված հիմնախնդիրների իրականացման առաջընթացի գնահատման ցուցիչներ և պլանավորված արժեքներ, առաջընթացը դեռևս վերլուծված չէ: Քոլեջում դեռևս չկա ՌԾ վերաբերյալ սահմանված հաշվետվողականության կարգ, իսկ ծրագիրը արդեն մի շրջափուլով ավարտվել է և հայտնի չէ, թե այս ՌԾ-ով քոլեջում ինչ առաջընթաց գրանցվեց:

Քոլեջն ԻՎ-ում նշվում է, որ «Քոլեջի ռազմավարական նպատակներին հասնելու համար մշակվում և իրականացվում են աշխատանքների գնահատման և համագործակցության ընթացակարգեր»: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ գնահատման ընթացակարգեր դեռևս չկան և ՈՆԱ կողմից քոլեջի տարեկան գործունեությունը դեռևս չի գնահատվում: Փորձագիտական խումբը դրական է համարում ռազմավարական կարճաժամկետ պլանների կազմումն ու դրանցում առկա գնահատողական ցուցիչների առկայությունը, սակայն պետք է նշել, որ այդ ծրագրերից բխող դեռևս հաշվետվություններ չեն կազմվում և տեսանելի չեն ձեռք բերված ցուցանիշները:

Այսպիսով, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊԳՔ-ն ունի ձևակերպված և ՈԱՇ-ին համահունչ առաքելություն, քոլեջի նպատակներն ու խնդիրները արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, քոլեջում կան առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների համար որոշ մեխանիզմներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի կառավարումն իրականացվում է «Կրթության մասին», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և այլ ՀՀ օրենքներով ու իրավական ակտերով: Քոլեջում ինքնակառավարման սկզբունքով գործում են քոլեջի Կառավարման խորհուրդը, Տնօրինական խորհուրդը, Ուսումնամեթոդական խորհուրդը, Ուսանողական խորհուրդը և այլ խորհրդակցական մարմիններ, որոնց միջոցով վեր են հանվում քոլեջում առկա խնդիրները և կայացվում են որոշումներ: Քոլեջի կառավարման կարգը սահմանված է քոլեջի կանոնադրությամբ և իրականացվում է կոլեգիալ և միանձնյա կառավարման սկզբունքների զուգակցման հիման վրա:

2017թ. դեկտեմբերի 20 թիվ 4 նիստում քոլեջի կառավարման խորհրդի կողմից հաստատվել է «Կառավարման և վարչարարության էթիկայի կանոնները» փաստաթուղթը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջում առաքելության ու նպատակների իրականացումը տեղի է ունենում պահպանելով կառավարման էթիկայի կանոնները, սակայն փաստաթղթի մասին դասախոսներն ու ուսանողները տեղյակ չէին: Փաստաթուղթը իրացվում է միայն ղեկավար անձնակազմի շրջանում:

Ուսումնական գործընթացների, ֆինանսական և տնտեսական գործունեության վարչարարությունն ու կառավարումն իրականացվում են ստորաբաժանումների միջոցով: Ստորաբաժանումներն աշխատանքի համար անհրաժեշտ միջոցների մասին ներկայացվում են հայտեր: Քոլեջի ֆինանսական միջոցները ձևավորվում են հիմնականում պետական բյուջեից, նաև տարբեր կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունքում: Քոլեջն անհատույց օգտագործման իրավունքով տիրապետում է գույքի, շենք-շինությունների:

Քոլեջում կրթական և այլ նպատակների իրականացման համար առկա են անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, սակայն դրանցից բավարվածության վերլուծություններ չկան, ինչպես նաև բացակայում են վերլուծությունները կառավարման համակարգի արդյունավետության գնահատման վերաբերյալ:

Քոլեջի ԻՎ-ում ներկայացված է, որ Քոլեջի կանոնադրությունը և ստորաբաժանումների կանոնակարգերը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն են ընձեռում ներգրավվել կառավարման գործընթացում, ինչպես նաև իրենց առնչվող հարցերի քննարկմանը և դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը: Քոլեջի Կառավարման և Տնօրինական խորհուրդներում ներգրավված են դասախոսներ և ուսանողներ: Քոլեջում առկա է առաջարկությունների արկղ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողների և դասախոսների կողմից բարձրացվում են բազմաթիվ հարցեր խորհուրդներում, որոնք ստանում են իրենց համապատասխան լուծումները:

ՄՈՒՀ-ում դասախոսները և ուսանողները մասնակցում են իրենց առնչվող որոշումների կայացմանը, ինչը նպաստում է քոլեջի գործունեության թափանցիկությանը:

Քոլեջը իրականացնում է կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորում 2 մակարդակներով՝ ռազմական պլանավորում և ընթացիկ ուսումնական գործընթացի տարեկան պլանավորում: Միջնաժամկետ պլանավորում դեռևս չի իրականացվում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ կարճաժամկետ պլանավորումն իրենից ներկայացնում է առանց վերջնարդյունքների և առանց ֆինանսական ապահովման պլանավորում՝ ուսումնական հարցերի ժամանակացույցերի տեսքով, իսկ երկարաժամկետ

պլանավորումը ՌԾ-ի ժամանակացույցն է: Բացակայում են պլանավորման իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ, դեռն մշտադիտարկումների և պլանների իրացման վերաբերյալ հաշվետվություններ չեն ներկայացվում:

Քոլեջը իրականացնում է իր գործունեության վրա ազդող առանցքային գործոնների ուսումնասիրում, սակայն դրանք դեռևս քանակական և որակական վերլուծությունների չեն ենթարկվում: Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ գործատուների, համայնքային իշխանությունների ներկայացուցիչների հետ, վերհանվում են խնդիրներ, այդ թվում նոր մասնագիտությունների գծով ուսուցման կազմակերպման հետ կապված: Նախատեսվում է մշակել մշտադիտարկում իրականացնելու ընթացակարգ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ գործոնների ուսումնասիրությունը իրականացվել է միայն Գավառ քաղաքի և հարակից մի քանի բնակավայրերի շրջանում, տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների վերլուծություն չի իրականացվել, ըստ որի քոլեջը կարող էր հանրությանը առաջարկել նաև կարճաժամկետ դասընթացների կազմակերպման տարբեր ծրագրեր:

Քոլեջում կատարված ուսումնասիրությունները նպաստել են, որպեսզի ներդրվի նոր մասնագիտություն, որի պահանջը առկա է տարածաշրջանում:

2017թ-ից քոլեջում գործում է ՈՆԱՀ-ի ստորաբաժանումը: ԻՎ-ում քոլեջը ներկայացնում է, որ իր վարչարարությունն իրականացնում է պլանավորմամբ՝ որակի կառավարման սկզբունքով՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունն ու փորձագիտական այցի ընթացքում իրականացված դիտարկումները փաստեցին, որ քոլեջում ՊԻՍԲ շրջափուլը քոլեջի գործունեության մեջ չի իրականացվում: Կառավարման գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլում: Գնահատման և բարելավման մեխանիզմներ առկա չեն:

Այսպիսով, քոլեջի կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց, սահմանված են կառավարման էթիկայի կանոններ, քոլեջը ապահովված է անհրաժեշտ մարդկային, նյութական, բավարար ֆինանսական ռեսուրսներով, դասախոսներին և ուսանողներին մասնակցում են իրենց առնչվող որոշումների կայացմանը, իրականացվում է իր գործունեության վրա ազդող առանցքային գործոնների ուսումնասիրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում իրականացնում է «Ֆինանսներ (ըստ ճյուղերի)», «Անասնաբուժություն» «Հաշվապահական հաշվառում», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» միջին մասնագիտական և «Համակարգիչների շահագործում» նախնական մասնագիտական կրթական ծրագրերը: Քոլեջում ՄԿԾ-ները հիմնականում համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին: Ուսումնասիրված մասնագիտության կրթական ծրագրերի առարկայական ծրագրերում դեռևս ձևակերպված չեն նրանց նպատակները և համահունչությունը քոլեջի առաքելությանը, նկարագրված չեն ուսումնառության վերջնարդյունքները ըստ չափորոշիչի պահանջների և վերջնարդյունքների, որոնք

հիմնականում պետք է համապատասխանեն ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին: Սակայն, պետք է փաստել, որ յուրաքանչյուր մասնագիտության ՊԿՉ 2-րդ գլխում հստակ ձևակերպված են մասնագետի պարտրաստման վերջնարդյունքները, որոնք համահունչ են ՈԱՇ-ին:

Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված կրթական ծրագրերի միջև բովանդակային կրկնություններ հիմնականում չկան, իսկ առարկաների բովանդակային հաջորդականությունը պահված է: Առկա էր մեկ շեղում «Անասնաբուժություն» մասնագիտության ուսումնական պլանում, որտեղ «Ձեռներեցություն» առարկան ներառված էր հատուկ մասնագիտական առարկաների շարքում: Ուսումնական պլաններում տեսական դասընթացները հաճախ գերազանցում են գործնականին. գործնական պարապմունքների և պրակտիկաների ժամաքանակի ավելացման անհրաժեշտությունը բարձրաձայնվեց նաև ուսանողների կողմից:

Քոլեջում բոլոր մոդուլային դասընթացների համար գործում են մոդուլային ուսումնական ծրագրեր, որոնցում նկարագրված են առարկայի նպատակը, վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները: ԳՊԳՔ-ում գործում է դասավանդման մեթոդների ընտրության սահմանված հստակ քաղաքականություն ըստ «Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդիականացման քաղաքականության»: Փորձագիտակն խմբի կարծիքով դասավանդման և ուսումնառության մեթոդների ու ուսումնառության ակնկալվող արդյունքների համապատասխանեցում իրականացված չէ, դեռևս չեն ստուգվում կիրառվող մեթոդների արդյունավետությունը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ միջին մասնագիտական կրթական ծրագրերում ուսուցումն իրականացվում է մեծամասամբ դասախոսություններով: Գիտելիքի, հմտությունների և կարողությունների ձևավորմանը միտված դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդյունավետության գնահատման համար քննաշրջաններից հետո ամբիոններում, դեռևս չեն կատարվում առաջադիմության վերլուծություններ, այդ բոլոր գործընթացների արդյունավետությունը համակողմանի չի ուսումնասիրվում և բացահայտված թերությունների շտկման ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվում: Բացառությամբ որոշ հատուկենտ դեպքերի՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների պարբերական /ըստ վերջնարդյունքների/ արդիականացում չի իրականացվում:

Քոլեջում ուսանողների գնահատման քաղաքականությունը կանոնակարգվում է՝ «Ուսանողների գիտելիքների և կարողությունների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման ու գնահատման կանոնակարգ»-վ, որի նպատակն է արտաքին շահակիցներին, դասախոսական կազմին և ուսանողությանը ծանոթացնել գնահատման մեթոդաբանությանը:

Ակադեմիական ազնվության պահպանման նպատակով 2017թ.-ին քոլեջում ստեղծվել է Ակադեմիական ազնվության հայեցակարգը, սակայն փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ այդ հայեցակարգը դեռևս չի գործում, իսկ միջազգային փորձագետը բացահայտեց նույնիսկ գրագողության և անազնվության դեպքեր: Քոլեջը քայլեր չի ձեռնարկում ակադեմիական ազնվության վերաբերյալ ուսանողների իրազեկվածության բարձրացման ուղղությամբ: Թեև քոլեջում մշակել է «Ուսանողների բողոքարկման քննարկման կարգ», սակայն այդ համակարգը չի գործում սահմանված ընթացակարգերով: Բողոքարկումների արձանագրում տեղի չի ունենում: Գրագողության վերահսկման ձևավորված արդյունավետ մեխանիզմներ քոլեջում առկա չեն:

Ըստ գործող կարգի 1.3 կետի ուսանողը կարող է բողոքարկել գիտելիքների գնահատման արդյունքները, սակայն այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջում տեղյակ չեն հաստատված ընթացակարգի մասին:

ԳՊԳՔ-ն չունի բենչմարքինիգի իրականացման հստակ մշակված քաղաքականություն և հուսալի գործիքակազմով մեթոդաբանություն, սակայն իրականացվել են որոշ քայլեր այս ուղղությամբ: ՄԿԾ-ների մշտադիտարկումների արդյունքում բացահայտվել է ուսումնական պլանների, ուսումնական գործընթացի ժամանակացույցի, դասացուցակների առկայությունը և ճշտությունը, մոդուլների ուսումնական հաջորդականության պահպանման վիճակը, ուսումնական պարապմունքների անցկացման կարգը, ուսանողների աշխատանքը դասի ընթացքում, թիմային աշխատանքի ապահովումը, գնահատման վավերացումների առկայությունը: Մշտադիտարկումների և վերապատրաստումների արդյունքում դասախոսները վերանայել և բարելավել են մոդուլային ծրագրերը, աշխատանքային թեմատիկ պլանները, ուսումնառության նյութերը, գնահատման թերթիկները: Քոլեջում կարևորում են մշտադիտարկման գործընթացի անհրաժեշտությունը, սակայն դեռևս կանոնակարգված գործընթաց տեղի չի ունենում և չեն վերլուծվում մշտադիտարկման ձեռք բերված արդյունքները:

Մշտադիտարկման լավ մեխանիզմ է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների ընդգրկումը: Նրանց կողմից կազմվում են հաշվետվություններ, որտեղ ամփոփվում է հանձնաժողովի կարծիքը շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների մակարդակի վերաբերյալ և արվում են առաջարկություններ շրջանավարտների կողմից դրանց իրականացման հետագա բարելավման ուղղությամբ:

Քոլեջում կրթական ծրագրերի մշակման և վերանայման ընթացակարգը քոլեջների համար սահմանված են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից, որը դեռևս ՄՈՒՀ-ի կողմից լիարժեք չի կիրառվում: Քոլեջի ՌԾ 5-րդ հիմնախնդիրը ևս սահմանում է ՄԿԾ մշտադիտարկման համար իրականացվող քայլեր, սակայն մշտադիտարկում և բարելավում դեռևս չի իրականացվում:

Այսպիսով, մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, իրականացվում են պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների, համահունչ են նմանատիպ այլ ծրագրերի հետ, քոլեջում կա մշակված ուսանողների գնահատման քաղաքականությունը, գործում են ՄԿԾ իրականացման արդյունավետության գնահատման որոշ մեխանիզմներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում դիմորդների ընդունելության գործընթացը իրականացվում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի ընդունելության կարգին համաձայն: Քոլեջը դիմորդների հավաքագրման նպատակով պարբերաբար կազմակերպում է այցեր համայնքի դպրոցներ, պատրաստվում են Քոլեջի մասին պատմող բուկլետներ, հայտարարություններն ու նկարահանված միջոցառումները ցույց են տալիս տեղական՝ «Գավառ» հեռուստաալիքով, հայտարարում են «Բաց դռների օրեր», որոնց

միջոցով աշակերտների շրջանում կազմակերպվում են ճանաչողական այցեր Քոլեջ: ՈՒԽ-ի անդամների կողմից կազմակերպվում են հայտարարության թերթիկների տարածումը մարդաշատ վայրերում: Քոլեջի մասին տեղեկություն է հաղորդվում նաև Քոլեջի պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ Քոլեջը կատարել է ուսանողների հավաքագրման մեխանիզմների վերլուծություն, որից պարզվել է, որ ուսանողների թիվը ավելացել է (2016/2017ուս. տարի 113 ուսանող, 2019/2020ուս. տարի 205 ուսանող), ինչը, հաշվի առնելով մարզի ժողովրդագրական ցուցանիշները, դրական միտում է:

Ուսանողների կրթական կարիքների և առաջարկությունների վերհանման նպատակով քոլեջում տեղադրված է առաջարկությունների արկղ, հաճախ իրականացվում են բանավոր հարցումներ, անանուն հարցումներ հարցաթերթիկների միջոցով: Ուսանողները ներգրավված են ՈՒԽ-ի, Տնօրինական Խորհրդի, Կարիերայի կենտրոնի, Կառավարման Խորհրդի մարմիններում: Կատարված հարցումները վերլուծվում են և արդյունքների մասին տեղեկություն են հաղորդում ուսանողներին: Այցի ժամանակ պարզվեց, որ քոլեջն ունի գործող բուֆետ, բուժկետ, դահլիճ, ավտոբուս՝ ուսանողների տեղափոխման համար, բավարար նյութատեխնիկական բազա (տպիչներ, համակարգիչներ, գույք, լաբորատորիա): Ուսանողների առաջարկությամբ դասերից հետո անցկացվում է «Պար և ռիթմիկա» նախասիրական առարկան: Փորձագիտական խումբը պարզեց, որ հարցումներ անցկացվել են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ: Ուսանողները գոհ են դասավանդման մեթոդներից և ուսումնական միջավայրից: Բանավոր հարցումներ են անցկացվել շրջանավարտներից: Վերջիններիս հետ հանդիպման ժամանակ փորձագիտական խումբը պարզեց, որ նրանք խնդիրներ չեն ունեցել աշխատանքի տեղավորվելիս՝ շնորհիվ քոլեջում անցկացվող պրակտիկաների:

Ուսանողների առաջադիմության բարձրացման նպատակով Քոլեջում անցկացվում են խորհրդատվական պարապունքներ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ դասը չյուրացրած, դասից բացակայած, ինչպես նաև քննություն վերահանձնող ուսանողներին տրամադրվում են խորհրդատվական պարապունքներ: Քոլեջում անցկացվում են կարճաժամկետ դասընթացներ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», «Անասնաբուժություն» մասնագիտություններով, անցկացվել են նաև անգլերենի դասընթացներ: Ուսանողների մոտ 60%-ը տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուների: Քոլեջում գործում է նաև Skye ակումբը, որը բաժանված է 2 խմբերի, յուրաքանչյուր խումբն ունի իր լիդերները: Լիդերները ուսանող և շրջանավարտ էին: Skye ակումբը ունի ոչ միայն ուսանողական, այլ նաև համայնքային ներգրավվածություն: Կա հստակ ժամանակացույց, հանդիպումները իրականացվում են շաբաթական մեկ անգամ, որի ընթացքում իրականացվում են հարցումներ, սեմինարներ, հետազոտություններ, քարտեզագրում, խմբային աշխատանքներ, դերային խաղեր: Ակումբի անդամները իրականացրել են նաև փորձի փոխանակում Ստեփանավանի գյուղատնտեսական պետական քոլեջի Skye ակումբի անդամների հետ: Skye ակումբի առջև դրված խնդիրներից են՝ համայնքային խնդիրների լուծման համար երիտասարդական ներուժի օգտագործումը, գենդերային կարծրատիպերի հաղթահարման օժանդակումը, Skye այգու և համայնքում կանգառների հիմնումը: Դրանց լուծման համար ծրագրեր են մշակվում: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողների ակտիվության ցուցաբերումը Skye ակումբի շրջանում:

Քոլեջը հնարավորություն է տալիս ուսանողին հաղորդակցվելու դասախոսների և վարչական անձնակազմի հետ: Կուրսղեկները ուսանողներին տալիս են իրենց հուզող հարցերի պատասխանները, առաջին կուրսի ուսանողներին ծանոթացնում են քոլեջի առօրյային, ներկայացնում են նրանց իրավունքներն ու պարտականությունները: Քոլեջում առկա է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կարգ:

Քոլեջում գործում է Կարիերայի կենտրոն, որն ունի իր կանոնադրությունը և յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ներկայացնում է հաշվետվություն: Կարիերայի ստորաբաժանումը կանոնադրության համաձայն իրականացնում է կարճաժամկետ ուսումնական ծրագրեր, սեմինարներ, որոնց ընթացքում ուսանողները ձեռք են բերում CV լրացնելու, ժամանակը ճիշտ պլանավորելու, մասնագիտական կողմնորոշման, հարցազրույցին ճիշտ ներկայանալու և այլ հմտություններ: Կարիերային ուղղված հանդիպումներ են անցկացվում նաև գործատուների, զվաղվածության կենտրոնի հետ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ ուսանողները տեղեկացված են և ակտիվորեն մասնակցում են Կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպած միջոցառումներին, պահպանվում են Քոլեջ-ուսանող-շրջանավարտ սերտ կապերը, անցկացված հարցումները վերլուծվում են: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերլուծությունները հաճախ մակերեսային են, համակողմանի չեն, բացթողում կա աշխատաշուկայի կարիքների վերհանման ուղղությամբ: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ ուսանողները, որպես հետազոտություն գրում են ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ, անցկացնում են գործնական պրակտիկաներ (ճագարի արյան նմուշի հետազոտություն): Կան հետազոտությունների անցկացման համար բավարար պայմաններ, սակայն ուսանողներին չեն ներկայացվում դրանց կիրառելիության վերաբերյալ ձևաչափեր և չկան հաստատված կանոնակարգեր:

Ուսանողների իրավունքների պաշտպանության և խնդիրների վերհանման համար Քոլեջում գործում է ՈՒԽ-ն, որն անկախ, ինքնակառավարվող և ընտրովի մարմին է: Այն գործում է 2013 թվականին հաստատված ՈՒԽ կանոնադրության և կանոնակարգի համաձայն, ըստ աշխատանքային պլանի և յուրաքանչյուր տարվա վերջում ներկայացնում է հաշվետվություն: ՈՒԽ անդամները և նախագահը ընտրվում են համաձայն ՈՒԽ կանոնադրության: Փորձագիտական այցի ժամանակ նկատվեց, որ ՈՒԽ-ն ակտիվ աշխատանքներ է կատարում, ուսանողների շրջանում անցկացված հարցումները ստացել են իրենց լուծումները, հիմնական խնդիրները այժմ կապված էին հնամաշ գույքի, ավտոբուսի, լաբորատորիայի նորացման, միջազգային փորձի փոխանակման հետ: Ուսանողները տեղեկացված և բավարարված էին ՈՒԽ-ի գործունեությունից: Ուսանողների առօրյան հետաքրքիր և բովանդակալից դարձնելու համար ՈՒԽ-ի կողմից կազմակերպվել են միջոցառումներ, արշավներ, կինոդիտումներ: Փորձագիտական խումբը դրական է համարում ՈՒԽ-ի ակտիվ գործունեության ծավալումը:

Այսպիսով, քոլեջն ունի ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ և աշխատող մեխանիզմներ, սկսել է իրականացնել ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն, կազմակերպում է լրացուցիչ պարապմունքներ, իրականացնում կարճաժամկետ դասընթացներ, վարչական անձնակազմը հասանելի է ուսանողության համար, գործում է ուսանողների կարիերայի կենտրոնը, ունի ակումբներ, որոնք նպաստում են ուսանողության ակտիվության և նախաձեռնողականության աճին, ուսանողների իրավունքների պաշտպանության համար կան մեխանիզմներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում կրթական ծրագրերի իրականացման համար ներգրավված են թվով 24 դասախոսներ և ուսումնաօժանդակ կազմի 29 միավոր հաստիքային աշխատողներ: Դասախոսներից 23-ը ունեն բարձրագույն կրթություն, 1-ը՝ միջին մասնագիտական, նրանցից 21-ը աշխատում են հիմնական, 2-ը՝ համատեղությամբ, 1-ը՝ ժամավճարով: Դասախոսական կազմի ընտրությունը իրականացվում է «Մանկավարժների նշանակման մրցութային ընթացակարգի» համաձայն: Թափուր տեղի առկայության դեպքում տրվում է հայտարարություն, իրականացվում է մրցույթ և հաղթողի հետ կնքվում է պայմանագիր՝ որոշակի կամ անորոշ ժամկետներով: Քոլեջում գործում է նաև մանկավարժների խրախուսման և տույժի ենթարկելու մեխանիզմներ: Այցի ընթացքում պարզվեց, որ խրախուսման դեպքերը կապված են բարեխիղճ աշխատանքի և ծանրաբեռնվածության հետ, իսկ տույժի կիրառում չէր գրանցվել: Առկա էին շեղումներ դասախոսների մասնագիտական որակավորումների և դասավանդվող մոդուլների համապատասխանության միջև: Փորձագիտական խումբը ռիսկային է համարում քոլեջում անձնակազմի զարգացման ծրագրի բացակայությունը, քանի որ քոլեջում մեծ թիվ են կազմում 50 տարեկանից բարձր տարիք ունեցող դասավանդողները, իսկ մասնագետների խնդիրը արդեն իսկ առկա է քոլեջում:

Քոլեջում դասախոսական կազմի որակներին ներկայացվող պահանջները սահմանված են մասնագիտության պետական կրթական չափորոշիչներով, դասախոսների մեծ մասը ունի երկարամյա աշխատանքային փորձ:

Քոլեջի ԻՎ-ում ներկայացված է, որ սահմանված են դասախոսական կազմի գնահատման համար մի շարք մեխանիզմներ, որոնց իրականացման սկզբունքներն են անկախությունը, օբյեկտիվությունը և գաղտնիությունը: Իրականացվում են դասալսումներ տնօրենի, փոխտնօրենի, ամբիոնի վարիչների և դասախոսների կողմից, դրանք քննարկվում են, ներկայացվում են լավագույն օրինակները: Դասավանդման որակի գնահատում է իրականացվում նաև ուսանողների կողմից: Մեծ ուշադրություն է դարձվում սկսնակ դասախոսների վարպետության աճին: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ առկա է գնահատման քաղաքականություն, բայց այն բարելավման կարիք ունի, քանի որ քոլեջում գնահատման, ուսումնական գործընթացի կատարելագործման ու դասավանդման որակի բարելավման միակ միջոցը դասալսումն է:

Քոլեջում իրականացնում են դասավանդողների կատարելագործմանն ուղղված որոշակի քայլեր: Դասախոսական կազմը մասնակցել է մասնագիտական վերապատրաստումների, դասընթացներ են կազմակերպվել փորձառու դասախոսների կողմից: Գործում է «Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ»: Կարիքների բացահայտումն ունի իր մեխանիզմները՝ հարցումներ, փոխադարձ դասալսումներ, բաց-դասեր, դաս-միջոցառումներ, մեթոդական զեկուցումներ: Այցի ընթացքում ուսումնասիրվեցին մեխանիզմների հետ կապված փաստաթղթերը և գրանցվեցին դրանցում առկա խնդիրներ՝ կապված հետազոտական

տարրերի բացակայության և զուտ մեխանիկական աշխատանքի հետ: Դասախոսների 20%-ը ամեն տարի վերապատրաստվում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումների ժամանակ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսների մասնագիտական ունակությունների գնահատում դեռևս տեղի չի ունենում և ըստ այդմ էլ չեն վերապատրաստվում դասախոսները: Որոշ դասախոսներ վերապատրաստվել են նաև սեփական նախաձեռնությամբ:

Քոլեջում կրթական ծրագրերի կադրային կայունությունը ապահովելու համար մշակվել է «Մանկավարժական աշխատողների նշանակման մրցութային ընթացակարգ»-ը, ըստ որի իրականացվում են համապատասխան կադրերի ընտրություն: Սակայն հիմնական դասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունն ու ընթացակարգերը դեռևս բացակայում են քոլեջում, չեն կատարվում ուսումնասիրություններ կադրային ապահովությունը իրականացնելու համար և չեն գնահատվում ռիսկերը:

Այսպիսով, փորձագիտական խմբի կողմից դիտարկումները փաստում են, որ քոլեջը ունի կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ, այս ամենի շնորհիվ իր ռազմավարական նպատակների իրականացման համար ապահովված է անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը հետազոտության ոլորտում իր հավակնություններն որոշակիորեն ամրագրել է 2016-2020թթ ՌԾ-ում, որը համարվում է ապագայում քոլեջի կարևորագույն ձեռքբերումներից մեկը: Մասնավորապես քոլեջի ՌԾ-ում առկա «Քոլեջի տեսլականը» հատվածում նշվում է, որ «Գեղարքունիքի մարզի ազգաբնակչության տարբեր շերտերի կարիքների բացակայտումը, դրան համապատասխան լրացուցիչ կրթական ծառայությունների նոր ցանկի մշակումն ու առաջարկումը, քոլեջի միջազգայնացումը»:

Հետազոտության ոլորտում քոլեջը չունի սահմանված նպատակներ և խնդիրներ, չկան կոնկրետ հետազոտական հետաքրքրություններ և առաջնահերթություններ, ինչպես նաև դրանց կապը տարածաշրջանի կարիքների հետ: Հարկ է նաև նշել, որ որպես տարածաշրջանի ուսումնական հաստատություն, սակավաթիվ են տարածաշրջանին առնչվող իր ոլորտին և մասնագիտություններին համապատասխան արդի հիմնախնդիրների վերաբերյալ համակարգված հետազոտությունները: Քոլեջում բացակայում է հետազոտական ոլորտում նպատակներին հասնելու առանձնացված փաստաթուղթ, որում շարադրված կլինեն նաև կոնկրետ գործողությունները և պահանջվող ռեսուրսները, որոնց համապատասխան կմշակվեր և կծավալվեր ամբիոնների հետազոտական գործունեությունը: Բացակայում է հետազոտական աշխատանքների որակի, արդյունավետության և այդ աշխատանքներին հատկացվող ռեսուրսների բաշխվածության վերլուծություն՝ ըստ քոլեջի հետազոտական ուղղությունների և ամբիոնների:

Թեև, պետք է նշել, որ վերջին տարիներին միջպետական ֆինանսավորմամբ քոլեջում իրականացվել են որոշ հետազոտական ծրագրեր, այնուամենայնիվ քոլեջի կողմից գործնական քայլեր չեն ձեռնարկվում հետազոտական գործունեության խրախուսման նպատակով համապատասխան ֆինանսական ռեսուրսների հատկացման ուղղությամբ:

Ներկա պահին քոլեջը չունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջիում հետազոտությունների իրականացման և զարգացման փաստաթղթավորված հստակ քաղաքականություն և ընթացակարգեր առկա չեն: 2016-2010թթ. զարգացման ՌԾ-ում սահմանված հիմնախնդիրների իրականացման համար համակարգված քայլեր ձեռնարկված չեն: Քոլեջում չկա հետազոտական գործունեությունը համակարգող կառույց կամ նմանատիպ գործառույթ իրականացնող անձ:

Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ որևէ մեկն իրականացված հետազոտական աշխատանքի համար չի խրախուսվել: Փաստացի, առ այսօր քոլեջում հետազոտությունների զարգացումն ու նորարարությունը խթանող մեխանիզմներ չեն գործարկվել: Մինչդեռ ՀՀ որակավորումների ազգային շրջանակի[4] համաձայն 5-րդ մակարդակի շրջանավարտը պետք է կարողանա հավաքագրել, մշակել և վերլուծել մասնագիտությանն առնչվող քանակական և որակական տվյալներ, մասնագիտական ոլորտում առաջացած խնդիրների վերաբերյալ դատողություններ կատարել և լուծումներ առաջադրել՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում, ինչը անհնար է առանց հետազոտահեն կրթության: Ավելին, որոշ ՊԿՉ-ներում կան հետոտությունը որպես ուսումնառության առդյունք ներառող մոդուլներ: Օրինակ, «Անասնաբուժություն» ՊԿՉ-ում «Մարքեթինգ և գյուղատնտեսական արտադրանքի փաթեթավորում» մոդուլում ուսումնատություն արդյունք 2-ը ձևակերպված է հետևյալ կերպ. «Ներկայացնել մարքեթինգային տեղեկատվական համակարգերի և հետազոտությունների էությունն ու մեթոդները, մարքեթինգային միջավայրը»:

Ուսանողների հետազոտական աշխատանքի խթանման և զարգացման քաղաքականություն քոլեջը չի իրականացնում: Հետազոտական աշխատանքներում ակադեմիական ազնվությունն երաշխավորելու և գրագողությունը կանխարգելելու համար հրապարակման նախապատրաստված նյութերը քննարկվում են համապատասխան ամբիոններում: Քոլեջի ակադեմիական ազնվությանը նպաստելու և գրագողությունը կանխարգելելու նպատակով 2017թ.-ից գործածության մեջ է դրվել «Ակադեմիական ազնվության հայեցակարգը», որով սահմանվում են ակադեմիական անազնիվ վարքի դրսևորումները և ակադեմիական անազնվության դեպքերի լուծման ընթացակարգը: Համաձայն ակադեմիական ազնվության հայեցակարգի՝ յուրաքանչյուր տարվա վերջում պետք է հրապարակվի տարին ամփոփող հաշվետվություն (կետ 5.2), սակայն այն բացակայում է կայքում և քոլեջի տարեկան հաշվետվությունում: Հարկ է նշել նաև, որ բոլոր հանդիպումների ժամանակ փաստվեց, որ այդ հայեցակարգը գործառութային առումով չի կիրառվում: Փորձագիտական խմբի կողմից հայտնաբերվեցին ցիտման նորմերի խախտման և գրագողության որոշ դեպքեր:

Թեև քոլեջն իր ՌԾ-ով սահմանված տեսլականում կարևորում է քոլեջի միջազգայնացման անհրաժեշտությունը, սակայն միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածության համակարգման քաղաքականություն կամ խրախուսման կանոնակարգված մեխանիզմներ դեռևս առկա չեն: Բացակայում է հետազոտության միջազգայնացմանն ուղղված գործողությունների հստակ պլանավորում և իրականացում:

---

[4] ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 7-ի N 714-N որոշում:

Առկա է դասախոսական կազմի օտար լեզվի, մասնավորապես՝ միջազգային շփման լեզվի՝ անգլերենի, տիրապետման ոչ բավարար մակարդակ: Ներկայումս առկա չէ միջազգային հետազոտական դրամաշնորհներում ներգրավվածության կամ միջազգային հետազոտական կենտրոնների կամ կառույցների հետ համագործակցության մասին վկայող որևէ փաստ:

Քոլեջն իր ԻՎ-ում նշում է, որ «Քոլեջում հետազոտական գործունեության միջազգայնացումը յուրաքանչյուր ստորաբաժանման գործունեության գերակայությունն է»: Փաստաթղթերի ուսումնասիրումը (ամբիոնների կանոնակարգ և այլն) և փորձագիտական այցը ցույց տվեցին, որ նման գերակայություն կամ առաջնահերթություն քոլեջում դեռևս չկա:

Քոլեջն իր ԻՎ-ում փաստել է, որ «Քոլեջում հետազոտությունների կապն ուսումնական գործընթացի հետ կրում է իրավիճակային բնույթ: Առայժմ ձևակերպված չեն հատուկ մեխանիզմներ հետազոտությունների իրականացման և դրանցում սովորողների ընդգրկման համար: Քոլեջը կարևորություն է տալիս ուսումնական գործընթացի փոխկապակցմանը հետազոտական գործունեության հետ»:

Քոլեջում որպես հետազոտական գործունեության և կրթական գործընթացի փոխկապակցվածության հիմնական մեխանիզմ դիտարկվում են ռեֆերատները և կուրսային աշխատանքները: Փորձագիտական այցի ընթացքում ռեֆերատների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դրանցում հետազոտական բաղադրիչը թույլ է զարգացացած՝ հիմնականում սահմանված չեն ռեֆերատների նպատակները, մեթոդաբանությունն ու մեթոդները և հետազոտության գիտակարգային շրջանակները: Կիրառական ուղղվածությունը շեշտադրված չէր: Իսկ կուրսային աշխատանքներ չեն կատարվում վերջին տարիներին:

Անհրաժեշտ է նշել նաև, որ հետաղոտությունների միասնական տվյալների բազա քոլեջում առկա չէ, որի միջոցով հնարավոր կլիներ վերահսկել և կանխել գրագողությունը: Քոլեջում բացակայում է միջամբիոնային և միջառարկայական հետազոտությունների խթանման մեխանիզմները կամ դրանց արդյունավետության կամ ազդեցության վերաբերյալ որևէ ուսումնասիրություն: Կարելի է փաստել, որ դասավանդողների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները ոչ ֆորմալ կերպով են ներդրվում ուսումնական գործընթաց՝ միայն հատվածային արտացոլվելով մեթոդական զեկույցներում, որոնք ևս ձևական բնույթ էին կրում: Այդուհանդերձ չի իրականացվում դասընթացների բարելավման վրա դասախոսների անհատական հետազոտության արդյունքների ազդեցության գնահատում կամ հետազոտական գործունեության արդյունավետության գնահատում՝ ուսումնական գործընթացի վրա ազդեցության տեսանկյունից:

Այսպիսով, քոլեջի որդեգրած հետազոտության ոլորտում ռազմավարությունը չի իրագործվում, ծրագրերում քոլեջի հետաքրքրություններն ու հավակնությունները հետազոտության ոլորտում արտահայտված չեն, կրթության և հետազոտության կապը թույլ է արտահայտված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջն իր զարգացման ռազմավարական հայեցակարգում խնդիր է դրել հետևողականորեն

իրականացնել նպատակային միջոցառումներ՝ ուղղված մասնագիտությունների կրթական ծրագրերի ֆինանսական ռեսուրսների ապահովմանն ու բարելավմանը: Կրթական ծառայությունների իրականացման համար քոլեջն ունի 5 հա հողատարածք: Շենքերի ընդհանուր մակերեսը կազմում 2179.5 ք/մ: Ուսուցման գործընթացը կազմակերպվում է մեկ համալիր մասնաշենքում, որը իր մեջ ներառում է՝ 23 լսարան, ընդհանուր թվով հաշված լաբարատորիաների և կաբինետների թիվը կազմում է 17 միավոր: 2013-2018 թվականների ընթացքում գրադարանը համալրվել է 98 մասնագիտական և 120 հանրակրթական առարկաների դասագրքերով և ուսումնական ձեռնարկներով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի գրադարանում առկա չէ համապատասխան քանակի ժամանակակից մասնագիտական գրականություն՝ ըստ տարբեր ոլորտների: Ուսանողների և դասախոսների հետ հանդիպման ընթացքում նրանց մեծամասնությունը հավաստեց գրադարանում մասնագիտական գրականության համալրման անհրաժեշտությունը: Գրադարանի պահոցները ոչ բարվոք վիճակում են՝ պայմանավորված ֆինանսական միջոցների սղությամբ:

Քոլեջը բաժանորդագրված չէ որևէ մասնագիտական ամսագրի, անդամագրված չէ միջազգային գրադարանային ցանցերին: Գրադարանային ֆոնդի որոշ մասը նվիրատվություն է: Ընթերցասրահը և քոլեջի մնացած մասնաշենքերն ունեն համացանցային հասանելիություն, այդ թվում՝ WiFi գոտի: ՄՈՒՀ-ն ունի նիստերի դահլիճ նախատեսված հանդիպումների և քննարկումների կազմակերպման համար (300 մասնակցի համար): Քոլեջում առկա են քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ, որոնք արդիականացման կարիք ունեն: Բացվել է նաև անասնապահություն մասնագիտության համար ժամանակի պահանջներին համապատասխան լաբարատորիա, որի աշխատանքներին և օգտագործվող նյութերին ու սարքավորումներին արհեստավարժ կերպով տիրապետում էին ուսանողներն ու շրջանավարտները: Քոլեջն բուֆետի համար հատկացրել է տարածք, որը բխում է ուսանողների պահանջներից: Քոլեջն ունի մարզադահլիճ և որոշ սպորտային գույք և կից հանդերձարաններ:

Քոլեջն իր ֆինանսավորումը կատարվում է 2 ճանապարհով՝ բյուջետային և արտաբյուջետային: Վերջինս կազմվում է գույքային միջոցների վարձակալությունից: Քոլեջի ֆինանսական հոսքերի կառավարումն ու վերահսկողությունն իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ: Բյուջեի կատարողականը ներկայացվում է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ փաստացի տվյալների հիման վրա: Քոլեջը հիմնական ուսումնական գործունեությունից ստացվող պետական մուտքերից բացի այլ կայուն ֆինանսական ներհոսքեր չունի: ՄՈՒՀ-ի ծախսերի հիմնական մասը կազմում է աշխավարձային ֆոնդը:

Քոլեջում չկա կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների ձևավորման, բաշխման և կառավարման միասնական քաղաքականություն: Ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում է տարեկան կտրվածքով: Քոլեջի տարեկան բյուջեն հաստատում է քոլեջի Խորհուրդը: Ծախսերի պլանավորման ժամանակ հաշվի են առնվում ստորաբաժանումների կողմից իրենց կարիքների համար ներկայացվող հայտերը/պահանջագրերը:

Ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ ամեն տարի քոլեջի եկամուտների և ծախսերի նախահաշիվների և դրանց կատարողականների վերաբերյալ տրվում է հաշվետվություն ինչպես տնօրինական խորհրդի նիստում, այնպես էլ քոլեջի խորհրդի նիստում:

Քոլեջի նյութատեխնիկական բազայի բարելավման, ուսումնական գործընթացին միտված անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման պլանավորումն, ինչպես նաև ռեսուրսների բաշխման քաղաքականությունն իրականացվում է քոլեջի վարչակազմի առանձին պատասխանատուների կամ ստորաբաժանումների կողմից: Քոլեջն պլանավորում է առաջիկա ֆինանսական տարվա համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերումը՝ համաձայն

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի: Գնումների պլանը կազմվում է քոլեջի բոլոր ստորաբաժանումների կողմից ներկայացվող պահանջների հիման վրա: Որպես կանոն ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է կենտրոնացված ձևով, իսկ դրանց բաշխումը տեղի է ունենում ըստ առանձին բաժինների և ռեսուրսային կարիքների: Քոլեջում չկա պարբերաբար անցկացվող համակարգված վերլուծություն՝ արդյոք առկա ռեսուրսային բազան ապահովում է ՄԿԾ-ների արդյունավետ իրականացումը: Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված 4 ՄԿԾ-ները հիմնականում ապահովված են համապատասխան ռեսուրսային բազայով: Քոլեջում գործող կամ նախկինում իրականացված դրամաշնորհային ծրագրերը հնարավորություն են ընձեռել որոշակիորեն համալրել նյութական ռեսուրսները: Այնուամենայնիվ, ՄԿԾ-ների իրականացման համար գրադարանում առկա մասնագիտական գրականությունը և ուսումնամեթոդական ձեռնարկները սակավ են:

Քոլեջում փաստաթղթաշրջանառությունը կանոնակարգվում է ըստ «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական Քոլեջ» ՊՈԱԿ-ի գործավարության կանոնակարգի: Ներքին փաստաթղթաշրջանառությունը հիմնականում կատարվում է թղթային տարբերակով և էլեկտրոնային փոստի միջոցով: ՄՈՒՀ-ը նախատեսում է առաջիկայում ստեղծել ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ (ՌԾ, հիմնախնդիր 6): Էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգով կարիերայի պատասխանատուն ներկայացնում է հաշվետվություններ լիազոր մարմնին: Քոլեջի պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան էջը նպաստում են տեղեկատվության տարածմանը: Այնուամենայնիվ, արտաքին տեղեկատվության հրապարակման քաղաքականություն քոլեջում բացակայում է: Թեև քոլեջն ունի պաշտոնական կայքէջ, այդուհանդերձ առկա տեղեկատվությունն ունի ամբողջականացնելու և թարմացնելու անհրաժեշտություն:

Քոլեջի տարբեր ստորաբաժանումների գործունեությունն արտացոլող փաստաթղթերի արխիվացումը կատարվում է արխիվավարի կողմից:

Առաջին բուժօգնություն տրամադրելու և սահմանափակ շրջանակով բժշկական անհրաժեշտ ծառայությունների ցուցաբերելու նպատակով քոլեջում գործում է բուժկետ, որն իրականացնում է առաջին բուժօգնություն և ապահովված է ժամկետի մեջ գտնվող առաջին օգնության քիչ քանակությամբ դեղորայքով: Բուժկետում վարվում է գրանցամատյան: Քոլեջի մասնաշենքերում տեղադրված են հակահրդեհային պաշտպանության սարքավորումներ, կրակմարիչներ և այլ անհրաժեշտ պարագաներ: Սակայն մասնաշենքերն ապահովված չեն հրդեհ ազդարարող ինքնաշխատ համակարգերով, բացառությամբ նոր կառուցված մասնաշենքի: Քոլեջում ուսումնառում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ, սակայն քոլեջն գերազանցապես հարմարեցված չէ այդ ուսանողների կարիքներին: Նոր կառուցված մասնաշենքում առանձնահատուկ պայմաններ ունեցողների համար կան համապատասխան պայմաններ: Ուսանողների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման համար առկա է մարզասրահ:

Քոլեջում ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումն իրականացվում է՝ անհրաժեշտ ռեսուրսների և ծառայությունների բավարարվածության վերաբերյալ պարբերաբար անցկացվող հարցումների միջոցով: Թեև հարցումներն իրականացվում են, այդուհանդերձ դրանք անդրադառնում են ոչ բոլոր ռեսուրսներին և ծառայություններին և չկան նրանց գնահատման արդյունքների հիման վրա բարելավման պլանների մշակում: Փորձագիտական այցի ընթացքում տարբեր շահակիցներ նշեցին, որ քոլեջում առկա ռեսուրսային բազան հարստացման և արդիականացման կարիք ունի:

Այսպիսով, քոլեջը ստեղծել է առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար հարմարավետ ուսումնական միջավայր, այն իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար կարողանում է հատկացնել թեպետ և փոքր, բայց խիստ անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ, հարստացնելու համար նյութատեխնիկական բազան և լուծելու համայնք-քոլեջ տրանսպորտային ապահովվածության հարցը: Քոլեջը

քայլեր է ձեռնարկում ստեղծելու համար ապահով և անվտանգ միջավայր նաև հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում հաշվետվողականության գործընթացը կանոնակարգում է «Նախնական (արհեստագործական)», «Կրթության», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին օրենքներով, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով, ինչպես նաև քոլեջի կանոնադրությամբ: Քոլեջն իր գործունեությամբ հաշվետու է հասարակությանը և իր հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ ԿԳՍՄ նախարարությանը, և ունի հաշվետվողականության հստակ գործող մեխանիզմ: Յուրաքանչյուր տարի ստորաբաժանումների, կառավարման և խորհրդակցական մարմինների, ամբիոնների հաշվետվությունները ամփոփվում են տնօրենի տարեկան հաշվետվությամբ, որը ներկայացվում է քոլեջի Խորհրդի նիստում: Հաշվետվություններում արտացոլված են քոլեջի գործունեության տարբեր բնագավառները, սակայն հաշվետվություններն ուղղակի փոխկապակցված չեն քոլեջի ռազմավարական ծրագրին, և անդրադարձ չի կատարվում նախորդ տարիների հաշվետվություններից վերհանված խնդրահարույց կետերին: Քոլեջում գործող հաշվետվողականության համակարգը հիերարխիկ է և առավելապես ուղղահայաց: Հարկ է նշել, որ վերջին տարիներին ստորաբաժանումների հաշվետվություններն առավել գործնական են և բովանդակալից: Արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականության մեխանիզմներից է ՀՀ Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությանը, ու այլ պետական գերատեսչություններին օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացումը: Գործող հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ քոլեջում չեն իրականացվում: Այնուամենայնիվ, քոլեջը գիտակցում է շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող ընթացակարգերի բարելավման աշխատանքների կարևորությունը և քայլեր ձեռնարկում դրանց բարելավման ուղղությամբ:

Քոլեջի ընթացակարգերի, կրթական գործընթացների, տեղեկատվական համակարգի թափանցիկության ու հասանելիության մեխանիզմներն ամրագրված են քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրում և մի շարք այլ փաստաթղթերում: Քոլեջի գործունեության թափանցիկության և հասարակությանը հասանելիության համար օգտագործվում են տարբեր հարթակներ՝ «Գավառ» հեռուստաընկերությունը, հանրապետական պարբերականները, պաշտոնական կայքէջը, սոցիալական ցանցերը, ՊԴ և ուսանողական համակազմի պրոֆեսորադասախոսական անձնակազմի այցելությունները մարզի դպրոցներ, մասնակցություններ տարբեր փառատոնների ու մրցույթների և այլն: Դիմորդների ներգրավելու համար քոլեջը տպագրում է բուկլետներ: Նկատենք, որ քոլեջում դեռևս չի իրականացվում տեղեկատվության տարածման գործընթացի արդյունավետության վերլուծություն:

Քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրում (հիմնախնդիր 6) կանոնվել է հասարակայնության հետ կապերի զարգացումը և հանրային ծրագրերում քոլեջի ակտիվ ներգրավումը: Այնուամենայնիվ, բացակայում են այդ նպատակի իրագործման արդյունավետությունն ու առաջընթացը գնահատող չափանիշները: Քոլեջը շեշտադրում է գյուղատնտեսական կազմակերպությունների, հասարակական լայն շրջանակների, հանրային կառույցների հետ գործընկերային կապերի ընդլայնման հրամայականությունը, այդուհանդերձ այս ոլորտում դեռ առկա են խնդիրներ արտաքին շահակիցների ներգրավման ուղղությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ արտաքին շահակիցների հետ հետադարձ կապը դեռևս թույլ է, քանի որ, ըստ քոլեջի, վերջիններս շփման և հետադարձ կապի ապահովման առումով մոտիվացված չեն: Հասարակության հետ հետադարձ կապի ձևավորման համար ԳՊԳՔ-ն նաև մշակել է հարցաթերթեր: Հարցումներն իրականացվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների շրջանում, որով փորձ է արվում արտաքին շահակիցներին ներգրավվել կրթական տարբեր գործընթացներում, սակայն վերհանված խնդիրներին ընթացք չի տրվել և բացակայում են հարցումների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմները:

Քոլեջն առավել ճկուն հետադարձ կապի միջոց է համարում Facebook սոցիալական ցանցի պաշտոնական էջը, որտեղ յուրաքանչյուր ոք քոլեջի գործունեության մասին տեղեկատվություն ստանալուց բացի, կարող է կիսվել իրեն հուզող հարցի շուրջ և ստանալ համապատասխան արձագանք: Սակայն նույնը չի կարելի ասել քոլեջի պաշտոնական կայքէջի մասին, որտեղ դեռևս պատշաճ արագությամբ չի գործում այցելուների մեկնաբանություններ թողնելու արձագանքման մեխանիզմը: Նշենք նաև, որ այս առումով քոլեջում բացակայում են որակական վերլուծությունները: Քոլեջի կայքը հասանելի չէ օտարերկրյա շահակիցներին օտարալեզու տեղեկատվության բացակայության պատճառով:

Քոլեջն իր ռազմավարական խնդիրներից է համարում հասարակության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը: Սակայն հասարակությանը գիտելիքների փոխանցմանը միտված ֆորմալ մեխանիզմները բացակայում են: Այդուհանդերձ, առկա են այդ նպատակին ծառայող ոչ ֆորմալ մեխանիզմներ (հանդիպումներ, տարաբնույթ միջոցառումներ, խորհրդատվական ծառայություններ, դասընթացեր համայնքի և համայնքապատկան գյուղերի դասարանների աշակերտների համար և այլն): Այնուամենայնիվ, հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման հանրային պահանջարկի ուսումնասիրություն, առկա մեխանիզմների արդյունավետության համակողմանի գնահատում չի իրականացվել:

Այսպիսով, քոլեջն ունի և ապահովում է հաշվետվողականությունը սահմանված կարգի միջոցով, քայլեր է ձեռնարկում ապահովելու համար իր գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, կիրառում է հասարակությանը գիտելիքների փոխանցման ոչ ֆորմալ մեխանիզմներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում իր ՌԾ-ով ամրագրված ապագայի զարգացման տեսլականում կարևորագույն բաղադրիչ է համարում քոլեջի արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացումը:

Արտաքին կապերի ամրապնդման, կրթական ծառայությունների մատուցման նպատակով կնքվել են պայմանագրեր Գավառի քաղաքապետարանի, «ԿՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ի, «Բարեկամություն» ԲԲԸ-ի, «Գավառտրանս» ՓԲԸ-ի, «ՇԱՀ ուսումնական կենտրոն» ՍՊԸ, «Ջուլարթ» ՍՊԸ, «Զբաղվածության պետական ծառայություն», «Գավառի հաց» ԲԲԸ, Գավառի «Սննդարտ» ՍՊԸ, Գանձակ գյուղի «Ընտանեկան բիզնես» ԱՁ-ի հետ: Այս հիմնարկ-ձեռնարկություններում Քոլեջի ուսանողներն անցկացնում են արտադրական, տեխնոլոգիական և նախաավարտական պրակտիկաներ:

Պրակտիկաների ընթացքում ուսանողները խորացնում են իրենց տեսական գիտելիքները, ձեռք են բերում գործնական կարողություններ և հմտություններ, աշխատանքային փորձ, որը հետագայում հնարավորություն է տալիս նրանց աշխատանքի անցնելու այդ կազմակերպություններում:

Քոլեջը համագործակցում է գերմանական "GTZ" կազմակերպության հետ:

Համագործակցության արդյունքում դասախոսները վերապատրաստվել և սեմինարների են մասնակցել:

Փորձագիտական խումբը պարզեց նաև, որ միջազգային համագործակցության ոլորտում ԳՊԳՔ-ը չունի հստակ ձևակերպված նպատակ ու խնդիրներ իր ՌԾ-ում, միջազգայնացման համար չեն գործում արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Քոլեջը ԻՎ-ում նշում է, որ «արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածք ՄՈՒՀ-ը առայժմ չունի», սակայն բոլոր աշխատակիցները ակտիվորեն մասնակցում են տեղական հաստատությունների հետ համագործակցության հասնելու, ինչպես նաև փորձում են համացանցից գտնել տեղեկատվություն միջազգային ծրագրերին մասնակցելու համար: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջն այս առումով խնդիր ունի լիազոր մարմնի հետ, քանի որ չի կարողանում սահմանել համապատասխան հաստիք միջազգայնացման համար պատասխանատու նշանակելու կամ ենթակառուցվածք ստեղծելու համար:

Քոլեջը համագործակցում է «World-Vision Հայաստան» միջազգային կազմակերպության հետ, որի աջակցությամբ քոլեջում և տարածաշրջանի համայնքներում կազմակերպվել են մի շարք կարճաժամկետ դասընթացներ, մասնավորապես՝

- Համակարգչային հմտություններ
- Ինչպես գնահատել փոքր բիզնեսը
- Խմբի կառավարում
- Էլեկտրաաղեղնային եռակցում
- Բիզնես կառավարում
- Համակարգչային 3 ծրագրերի ուսուցում
- Անգլերենի եռամսյա դասընթաց
- «Կովերի, խոզերի, ոչխարների կրտսեր անասնաբույժ» թեմայով եռափուլ վերապատրաստման դասընթաց, որի շրջանակում քոլեջը ձեռք է բերել ժամանակակից սարքավորումներով հագեցած անասնաբուժական լաբորատորիա և 27 շահառու ստացել են «Կրտսեր անասնաբույժ»-ի վկայականներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ չկան քոլեջի միջազգային համագործակցության վերաբերյալ վերջին 3 տարիների վերլուծություններ և առհասարակ միջազգային զարգարգացման որևէ օրինակ և ձեռքբերումներ, սակայն ՄՈՒՀ-ը որոշակի քայլեր է ձեռնարկում արտաքին կապերի ընդլայնման և տեղական մակարդակով համագործակցություն ընդլայնելու ուղղությամբ: Փորձագիտական խումբը պարզեց, որ քոլեջը ունի միջազգային համագործակցության բավականին լավ ծրագրեր, որոնք իրականացվում են ոչ քոլեջի նախաձեռնությամբ, այլ հանդիսանում են համապետական մակարդակով իրականացվող ծրագրեր, որտեղ քոլեջն ինքնաբերաբար ընդգրկվում է որպես գյուղատնտեսական ոլորտի կրթական հաստատություն: Չափորոշիչների պահանջներից

բխող փոխանակման ծրագրեր դասախոսների համար դեռևս չկան: Առկա է նոր կնքված փոխանակման մեկ անժամկետ պայմանագիր Գերմանիայի Ագրար ՄՊԸ Դիստելոու տնտեսության հետ ուսանողների փոխանակման մասով: Պայմանագրով նախատեսված է, որ պրակտիկանտները հնարավորություն կունենան պրակտիկայի ընթացքում մասնակցել սեմինարների, պրակտիկան ավարտելու հետո կստանան վկայագիր: Պայմանագրից կարող են օգտվել միայն այն ուսանողները, որոնք գերազանց տիրապետում են գերմաներենի: Ինչպես պարզ դարձավ, փորձագիտական այցի ընթացքում, ուսանողների շարժունության համար խոչընդոտ է նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեությունը կարգավորող ՀՀ գործող օրենսդրությունը, քանի որ ուսանողը, որը մեկնում է արտասահման ուսումնառության նպատակով զրկվում է սովորելու իր անվճար տեղից, իսկ դա մարզի աղքատության պայմաններում խնդիր է:

Քոլեջի համար մեծ ձեռքբերում է «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» ծրագրում ընդգրկվածությունը, որի արդյունքում քոլեջը կունենա ուսումնափորձնական տնտեսություն /քոլեջն ունի ուսումնափորձնական տնտեսություն վարելու փորձ/, կաթի վերամշակման արտադրամաս, կհամալրվի նյութատեխնիկական բազան:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի դասախոսների և ուսանողների օտար լեզուների տիրապետելը կապահովի արտաքին կապերի ակտիվացման հեռանկարներ: Օտար լեզվի մակարդակը դեռևս անբավարար է մասնագիտական դասընթացների վարման և կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների փոխանակման համար: Ուստի պետք է անցկացնել օտար լեզվի լրացուցիչ դասընթացներ, որոնք փորձագիտական խմբի կարծիքով նպաստող գործոն կարող են հանդիսանալ քոլեջի միջազգայնացման համար: Հարկ է նշել, որ քոլեջում անցկացվել է անգլերենի եռամսյա դասընթաց, որին մասնակցել են քոլեջի ուսանողներ և մեկ դասախոս: Այն նպաստող գործոն է քոլեջի միջազգայնացման համար:

Այսպիսով, քոլեջը չունի արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ընթացակարգեր,չուի դրա համար առանձնացված ենթակառուցվածք, առաջին քայլերն է անում ուսանողների փոխանակման պայմանագրերի կնքման ուղղությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում որակի ապահովման գործընթացները կանոնակարգելու նպատակով մշակվել են մի շարք հայեցակարգային փաստաթղթեր (ՈԱԱՀ քաղաքականություն և ընթացակարգեր և այլն): ՈԱ համակարգին առնչվող բոլոր պաշտոնական փաստաթղթերի հասանելիությունը շահակիցներին սահմանափակ է: Որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության վերլուծություն Կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակիցների կողմից դեռևս չի իրականացվել, իսկ դրանց ազդեցությունը չի գնահատվել: Քոլեջի ներքին շահակիցները՝ ուսանողները, ՊԴ կազմը, համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և

աշխատակազմի մնացած ներկայացուցիչները հիմնականում տեղեկացված չեն քոլեջի ՈՆԱ ձեռնարկի և դրանում ներառված դրույթներ աշխատանքների մասին: Ներկայում քոլեջում հարցումներն են դիտարկվում որպես որակի ապահովման հիմնական մեխանիզմ, որոնք անցկացվում են դասախոսների, ուսանողների և մասամբ արտաքին շահակիցների շրջանում: Սակայն այդ հարցումները պարբերական և համակարգված բնույթ չեն կրում, հստակեցված չեն դրանց նպատակները, դրանց արդյունավետությունը դեռևս գնահատված չէ: Հարցաթերթիկների տրամադրված օրինակներից հնարավոր չէր ամբողջական պատկեր ստանալ քոլեջում առկա խնդիրների և ձեռքբերումների վերաբերյալ: Քոլեջը կարևորում է և անհրաժեշտ է համարում որակի ներքին ապահովման համակարգի ներդրումը, պարբերաբար ինստիտուցիոնալ ինքնագնահատման իրականացումն՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Քոլեջի որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրում է մարդկային, նյութական և որոշ ֆինանսական ռեսուրսներ:

Այցի ընթացքում փորձագիտական խմբի կողմից ՈԱ բաժնի գործունեության պայմանների, կադրային ապահովվածության վիճակի դիտարկումները փաստեցին, որ ներկայումս ՈՆԱ պատասխանատուն ապահովված է անհրաժեշտ գրասենյակային տեխնիկայով, կահույքով և նյութական ռեսուրսներով: Հարկ է նշել, որ ՈՆԱ բաժնի աշխատակիցների կատարողականի գնահատում և կարիքների վերհանում չի իրականացվում, համապատասխանաբար այդ գործընթացներից բխող հատուկ վերապատրաստումներ չեն իրականացվում: Ավելին, այդ պարտականությունները դրված էին փոխտնօրենի վրա, որով ՈԱ պատասխանատուն և համակարգը զրկվում են ինքնուրույնությունից և գնահատման հնարավորությունից: Բացի այդ փոխտնօրենի գերծանրաբեռնվածությունը իր հիմանկան պարտականությունների կատարման ուղղությամբ խոչընդոտ են հանդիսանում ՈՆԱ գործառույթները պատշաճ կերպով իրականացնելու համար: Փորձագիտական այցի պահին լիազոր մարմինը դեռևս չէր նախատեսում հաստիք՝ որակի ապահովման նպատակով:

Քոլեջի կազմակերպական կառուցվածքի սխեմայում այս կառույցը առանձնացված է և անմիջական ենթակայություն չունի տնօրենին, որը ևս փաստում է կառույցի ինքնուրույնության պակասի մասին:

Քոլեջը կարևորում է որակի ապահովման գործընթացներում ուսանողների և այլ շահակիցների ներգրավվածությունը: Ներքին շահակիցների ներգրավվածությունն որակի ապահովման գործընթացներում սահմանված է ՈՆԱ ընթացակարգերում: Ներքին շահակիցներին որակի ներքին ապահովման գործընթացներում ներգրավման և հետադարձ կապի ապահովման հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնք չեն կազմակերպվում շրջափուլային ձևով: Հարկ է նշել նաև, որ հարցումների արդյունավետության գնահատման վերաբերյալ վերլուծություններ չկան: Հարցումների կազմակերպման և անցկացման, տվյալների հավաքագրման ու մշակման, արդյունավետության գնահատման գործընթացներն ապահովված չեն հստակ մեթոդաբանությամբ: Ուսանողության ներկայացուցիչներ ընդգրկված են Կառավարման խորհրդում, տնօրինական խորհրդում, ինչպես նաև ինքնավերլուծության խմբում: Արտաքին շահակիցների ներգրավվածությունն որակի ապահովման գործընթացներում համակարգված բնույթ չի կրում: Արտաքին շահակիցների շրջանակներում իրականացվում են շրջանավարտների մասնագիտական որակից գոհատուների բավարարվածության հարցումներ: Ընդհանուր առմամբ, որակի ապահովման հիմնական գործընթացներին ներքին և արտաքին շահակիցների մասնակցության մեխանիզմները հստակ չեն գործում: ՈՆԱ պատասխանատուն չի վերլուծում շահակիցների մասնակցության աստիճանը որակի ապահովման գործընթացներին և դրա արդյունավետությունը:

Քոլեջում որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Որակի ապահովման համակարգի մշտադիտարկում և գնահատում դեռևս չի իրականացվել: Որակի

ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակման նպատակով իրականացվել է ոչ թիրախային բենչմարքինգ, որն ամբողջական չէ: Քոլեջը կարևորում է որակի շարունակական բարելավումն որպես իր քաղաքականության կարևորագույն սկզբունք (ՌԾ, հիմնախնդիր 2), սակայն չունի համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմներ և գործիքներ: Քոլեջի որակի ապահովման համակարգն ամբողջապես ձևավորված չէ և դեռևս չի իրականացրել իր գործունեության արդյունավետության գնահատում: ՊԻԳԲ շրջափուլը դեռևս ամբողջովին չի գործում:

Տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծման, տարածման և կառավարման գործընթացները համակարգված կերպով չեն իրականացվում: Քոլեջում ինստիտուցիոնալ համընդհանուր մոտեցում չկա: Առանձին ստորաբաժանումների ներսում գործընթացը կանոնակարգվում է, սակայն տարբեր ստորաբաժանումների միջև տեղեկատվության տարածման և կառավարման մեխանիզմները հստակ չեն: Արտաքին գնահատման նպատակով ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը նկարագրական է, բացակայում է վերլուծական մոտեցումը: Արտաքին գնահատման նպատակով ինստիտուցիոնալ մակարդակում տեղեկատվության հավաքագրման առաջին փորձը կատարվել է վերոնշյալ ինքնավերլուծության ժամանակ:

Որպես ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրման մեխանիզմներ քոլեջը նշում է տնօրենի տարեկան հաշվետվությունը, որում զետեղված են ուսումնական, վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքներն, ինչպես նաև ամբիոնների և այլ ստորաբաժանումների հաշվետվությունները: Կրթության որակի վերաբերյալ ներքին և արտաքին շահակցիների բավարարվածության վերաբերյալ հարցումների տվյալները կամ վերլծությունները չեն տրամադրվում ամբիոններին: Ներքին և արտաքին շահակիցների համար քոլեջի գործունեության թափանցիկությունն ապահովելու համար քոլեջը չի կարևորում տեղեկատվական համակարգերի առկայությունը:

Քոլեջի պաշտոնական կայքում մասամբ հրապարակվում է քոլեջում առկա մասնագիտությունների, գործող կրթական ծրագրերի, ընդունված որոշումների և այլնի մասին տեղեկատվություն: Կրթական ծրագրերի և քոլեջի որակի ապահովման գործընթացների վերաբերյալ հաշվետվությունները դեռևս հասանելի չեն շահակիցներին:

Այսպիսով, քոլեջն ունի որակի ապահովման քաղաքականություն, սակայն այն չունի հստակ ընթացակարգեր, դրա իրագործման համար անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ, տրամադրված չեն մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, ներքին և արտաքին շահակիցները իրազեկված չեն որակի ապահովման գործընթացների վերբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարար
2. Կառավարում և վարչարարություն	Բավարար
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարար
4. Ուսանողներ	Բավարար
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարար
6. Հետազոտություն և զարգացում	Անբավարար
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարար
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարար
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Անբավարար
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Անբավարար

Տիգրան Խաչատրյան

24.01.2020

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Տիգրան Մարտինի Խաչատրյանը 2011թթ. ավարտել է ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Պատմություն» բաժնի բակալավրիատը, իսկ 2013թ. նույն բաժնի մագիստրատուրան: 2013-2017թթ. սովորել է նույն բաժնի ասպիրանտուրայում՝ համաշխարհային պատմություն մասնագիտությամբ (Է 002): 2013-2015թթ. աշխատել է ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի օգնական: 2009-2015թթ. ընթացքում երկու անգամ ընդրվել է նույն ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ: 2016-2017թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում որպես Կրթության որակի ապահովման խմբի առաջատար մասնագետ: 2017թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում որպես կրթության որակի ապահովման բաժանմունքի պետ, ունի ոստիկանության ավագ լեյտենանտի կոչում: Մասնակցել է միջին մասնագիտական կրթության որակի բարձրացման հարցերին նվիրված մի շարք համաժողովների: 2018թթ.-ին մասնակցել է «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում» թեմայով Ֆորումին: 2017թ.-ից փորձագետ է ՀՀ միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների հավատարմագրման գործընթացներում: 2019թ. համակարգել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը:

Ռոլֆ Օթթո Կուդենբուրը 1980թ. ավարտել է Գերմանիայի Ս. Հանովերի համալսարանը՝ այգեգործական գիտությունների մասնագետի որակավորմամբ՝ պաշտպանելով դիսերտացիան "Բույսերի սնուցում" թեմայով: 1980-1984 թթ եղել է ասպիրանտուրայի ուսանող Հանովերի համալսարանում, 1983-ից Գեորգ Օգոստոս համալսարանում, Գյուտինգեն, Գերմանիա: 1984թ ստացել է գյուղատնտեսական գիտությունների դոկտորի աստիճան: 1984-1987թթ. աշխատել է Գյոթինգենի Գեորգ Օգոստոսի անվան «Գյուղատնտեսական քիմիայի ինստիտուտ»-ում որպես ավագ մասնագետ: 1985 - 1986 թթ, հետդոկտորական ուսումնասիրություններ է անցկացրել Փուրդուի համալսարանում, արևմտյան Լաֆայետ, Ինդիանա, ԱՄՆ: 1987-1991 թթ. աշխատել է որպես հետազոտող, դաշտային փորձարկումների ղեկավար BASF SE (գյուղատնտեսական հետազոտական կենտրոն) ընկերության բույսերի պաշտպանության մասնաճյուղում, Լիմֆուրգերհոֆ, Գերմանիա: 1991-1992 աշխատել է որպես ավագ մասնագետ Բույսերի սնուցման ինստիտուտում, Մյունխեն-Ուեյնեստեֆան տեխնիկական համալսարան, Գերմանիա: 1992-1999 աշխատել է Großbeeren/Erfurt V.-ում (Բանջարեղենային և դեկորատիվ մշակաբույսերի ինստիտուտ,) մինչև 10/1998 թ-ը՝ նույն ինստիտուտում՝ որպես գիտական գծով ղեկավար: 1999-2004 թթ. աշխատել է Լանդշաֆտի և հողօգտագործման հետազոտությունների կենտրոնում, (ZALF) Մյունխենբուրգ, Գերմանիա, 1999-2004թթ. եղել է հրավիրված գիտական Գրիֆին Քեմթուս Վրացական Համալսարանում: 2004-2011թթ. աշխատել է Lufa Restock լաբորատորիայում որպես տնօրեն՝ իրականացնելով խորհրդատվական, հետազատական աշխատանքներ, նույն թվականներին աշխատել է Ռոստոկի համալսարանում որպես դասախոս: 2011 թ.-ից որպես խորհրդատու զբաղվել է անհատ ձեռներեցությամբ (www.agrarknowhow.com): Նույն թվականից որպես հրավիրված դասախոս դասավանդել է Ռոստոկի համալսարանում: 2013-2015 թթ. աշխատել է LAND-DATA Eurosoft-ում որպես LDE ակադեմիայի ղեկավար, խորհրդատու, դասընթացավար: 2015-2019թթ. Գերմանական ակադեմիական փոխանակման ծրագրի (DAAD) շրջանակներում որպես բույսերի սնուցման դասընթացի հրավիրված դասախոս (երկարաժամկետ) աշխատել է Ղրղզստանի պետական համալսարանի ագրոնոմիայի և անտառտնտեսության

ֆակուլտետում , Բիշքեկ, Ղրղզստան: 2016 թ-ից որպես հրավիրված դասախոս աշխատել է Ղրղզստանի Թուրքական Մանաս համալսարանում, Բիշքեկ, Ղրղզստան:

Ռոզա Մերուժանի Հարությունյանը 1992թ-ին ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկաներ» ֆակուլտետը: 2015թ-ին ավարտել է Երևանի գբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական քոլեջի «Հանրային սննդամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությունը: 1991-2000թ աշխատել է Արմավիրի մարզի Լուկաշին գյուղի միջնակարգ դպրոցում որպես դասվար և հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչ: 2000թ.-ից աշխատում է Արմավիրի պետական ինդուստրիալ մանկավարժական քոլեջում, 2016թ.-ից քոլեջի ուսումնական մասի վարիչ, 2018թ.-ից ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ:

Էթերա Սերյոժայի Խաչատրյանը 1997թ.-ին ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Կենսաքիմիա ֆակուլտետի լրիվ դասընթացը, Կենսաբանություն և էկոլոգիա մասնագիտությամբ: 2007թ.-ից մինչև 2009թ.աշխատել է Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջում որպես դասախոս: 2009թ.-ից մինչև 2017թ.-ը Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջի ուսումնական գծով փոխտնօրեն: 2017թ.-ից մինչ օրս ՀԱԱՀ Ա.Ե.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի փոխտնօրեն: Համատեղությամբ՝ ՀԱԱՀ-ի Ագրոնոմիական ֆակուլտետի Կենսաբանության և կենսատեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ:

Գայանե Արմենի Վարդանյանը սովորում է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» բաժնի III կուրսում: 2016-2017թթ. եղել է Արևշատի միջնակարգ դպրոցի Աշակերտական Խորհրդի նախագահ: 2017-2020թթ. ընդգրկված է եղել Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի Ուսանողական Խորհրդի կազմում: 2018-2019թթ. մասնակցել է Բրիտանական Խորհրդի կողմից կազմակերպած «Անգլերենի» և «Հաղորդակցման հմտություններ» կարճաժամկետ դասընթացների: Նույն թվականին վերապատրաստվել եմ ՈԱԱԿ-ում և ստացել ուսանող-փորձագետի որակավորում: 2019 թվականին մասնակցել է Հայաստանի Ամերիկյան Համալսարանում «ՄԿՈՒ-գործատու երկխոսություն. համատեղ ռազմավարության բանաձև» խորագրով համաժողովին և Հայ-ռուսական համալսարանում տեղի ունեցած «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով համաժողովին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

16.01.2020թ.-18.01.2020թ.

	16.01.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:00	09:30	30 րոպե
2.	Հանդիպում քոլեջի Խորհրդի կազմի հետ	09:40	10:10	30 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	10:20	11:00	40 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ (8-10 մասնակից)	11:10	11:50	40 րոպե
4.	Հանդիպում ուսումնաօժանդակ կառույցների աշխատակիցների հետ /հաշվապահ, գնումների համակարգող, կադրերի տեսուչ, գրադարանի վարիչ/	12:00	12:40	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների հետ (8-12 շրջանավարտ)	14:00	15:00	60 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ (8-12 գործատու)	15:10	16:10	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	18:00	100 րոպե

	17.01.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	09:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի հետ (8-12 դասախոս)	10:10	11:10	60 րոպե
3.	Այցելություն ամբիոններ և փաստաթղթերի ուսումնասիրություն	11:20	12:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Հանդիպում որակի ապահովման հանձնաժողովի անդամների հետ	13:40	14:40	60 րոպե
6	Հանդիպում կարիերայի պատասխանատուի հետ	14:50	15:40	50 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:50	17:00	140 րոպե

	18.01.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ (8-12 ուսանող)	09:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում ուսանողների հետ (առկա, 8-12 ուսանող)	10:10	11:10	60 րոպե
3.	Այցելություն քոլեջի Sky ակումբներ	11:20	12:20	60 րոպե

4.	Ընդմիջում	12:30	13:30	60 րոպե
5.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	13:40	14:10	30 րոպե
6.	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, մարզասրահներ, լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, բուժկետ, բուֆետ)	14:30	15:30	60 րոպե
8.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	15:40	16:20	40 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	17:30	60 րոպե
10.	Ամփոփիչ հանդիպում քոլեջի տնօրենի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ
1.	Կառավարման խորհրդի արձանագրություններ	2
2.	Տնօրինական խորհրդի արձանագրություններ	2
3.	Ուսումնամեթոդական խորհրդի արձանագրություններ	2
4.	Ամբիոնների արձանագրություններ	3
5.	Ուսանողական խորհրդի արձանագրություններ	4
6.	ՌԾ ժամանակացույց-պլան	2
7.	Պաշտոնի նկարագրեր	5
8.	Հաստիքացուցակ	5
9.	Տարիֆիկացիոն ցուցակ	5
10.	Կարճաժամկետ պլաններ	2
11.	Ստորաբաժանումների հայտեր	7
12.	Հարցաթերթիկներ	10
13.	Մեթոդական զեկույցներ	3
14.	Բաց դասերի պլաններ	3
15.	Դասալսումների թերթիկներ	3
16.	Մոդուլների գնահատման փաթեթներ	3
17.	Մասնագիտական կրթական ծրագրեր	3
18.	Կարիերայի պատասխանատուի կատարած հարցումներն ուվ վերլուծությունները	

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Ուսումնական կաբինետներ
3. Համակարգչային լսարաններ
4. Անասնաբուժության լաբորատորիա
5. Կենսաբանության և քիմիայի լաբորատարիա
6. Մարզադահլիճ
7. Բուժկետ
8. Հանդիսությունների սրահ
9. Կարիերայի պատասխանատուի աշխատասենյակ
10. ՈՒԱ պատասխանատուի աշխատասենյակ
11. Գրադարան և արխիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՍՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԳՊԳՔ- Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ
2. ԳՊՀ – Գավառի պետական համալսարան
3. ԻՎ- ինքնավերլուծություն
4. ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր
5. ՄԿՈՒԶԱԿ – Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
6. ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն
7. ՊԴ կազմ – պրոֆեսորադասախոսական կազմ
8. ՈԱԾ – որակավորումների ազգային շրջանակ
9. ՈԱ մեխանիզմներ – որակի ապահովման մեխանիզմներ
10. ՈՆԱ - որակի ներքին ապահովում
11. ՈՆԱՀ - որակի ներքին ապահովման համակարգ
12. ՌԾ – ռազմավարական ծրագիր
13. ՈւԽ – ուսանողական խորհուրդ
14. ՈւՕ – ուսումնաօժանդակ կազմ